# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

**Գործուղված պաշտոնատար անձ՝** Վիգեն Քոչարյան:

**Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը**՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

**Գործուղման վայրը և ժամկետները՝** Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2018թ. մայիսի 23-ից 25-ը:

**Հրավիրող կողմը՝** Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողով (ECRI):

**Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) կողմից կազմակերպված «Իրավահավասարության ապահովման մարմինների նոր չափանիշներ» թեմայով համաժողովին:

**Քննարկված թեմաները՝** Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված Ընդհանուր քաղաքականության թիվ 2 հանձնարարականով հաստատված իրավահավասարության ապահովման մարմինների նոր չափանիշներին, ինչպես նաև իրավահավասարության ապահովման մարմինների անկախությանն ու անկողմնակալությանն առնչվող հարցեր:

**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

«Իրավահավասարության ապահովման մարմինների նոր չափանիշներ» թեմայով համաժողովի ընթացքում Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովը մասնակիցներին ներկայացրել է Հանձնաժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված Ընդհանուր քաղաքականության թիվ 2 հանձնարարականով հաստատված իրավահավասարության ապահովման մարմինների նոր

չափանիշները, ինչպես նաև քննարկվել է իրավահավասարության ապահովման մարմինների անկախությանն ու անկողմնակալությանն առնչվող հարցեր:

Համաժողովի ընթացքում մասնակիցներն անդրադարձ են կատարել ատելության խոսքի դեմ պայքարի արդյունավետ միջոցներին, զոհերին օգնություն և աջակցություն ցուցաբերելու մեխանիզմներին, տվյալների հավաքագրմանը, բողոքների քննության արդյունավետության բարձրացմանը և այլ կարևոր խնդիրներին:

Համաժողովի հիմնական նպատակն է եղել աջակցել անդամ պետություններում իրավահավասարության ապահովման մարմինների համար արյդյունավետ չափորոշիչների ներդրմանը, իրավահավասարության մարմինների դերի բարձրացմանը, ինչպես նաև ատելության խոսքի դեմ պայքարին: Համաժողովը հանդիսացել է արդյունավետ հարթակ ԵԽ անդամ-պետությունների ներկայացուցիչների համար ոլորտի լավագույն փորձի փոխանակման համար:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը համաժողովի ընթացքում ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնական կարգավորումները՝ հատուկ անդրադարձ կատարելով Իրավահավասարության խորհրդի ստեղծմանը և Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես իրավահավասարության ապահովման մարմնի դերակատարմանն առնչվող դրույթներին: Վ. Քոչարյանը վերահաստատել է Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը շարունակելու իրագործել Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությունները մարդու իրավունքների պաշպանության ոլորտում:

Համաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը պայմանավորվածություններ է ձերք բերել Եվրոպայի խորհրդի հետ իրավահավասարության ապահովման ոլորտում ձևավորված երկխոսության և համագործակցության շարունակականության ապահովման վերաբերյալ:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ**